



Բ Ա Ն Բ Ե Ր

Արդարադատության ակադեմիայի

BULLETIN

of Academy of Justice

ВЕСТНИК

Академии юстиции





ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ / PUBLIC LAW / ПУБЛИЧНОЕ ПРАВО



ՄԱՐԿՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական իրավաբանական խորհրդարարության կենտրոնի դասախոս-կոորդինատոր, ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ

MARKOSYAN TIGRAN

Candidate of Legal Sciences, Lecturer-Coordinator at the Student Law Counselor Center of the Faculty of Law of YSU, Member of the Competition Protection Commission of the Republic of Armenia

МАРКОСЯН ТИГРАН

Кандидат юридических наук, преподаватель-координатор Центра студенческих юридических консультаций юридического факультета ЕГУ, Член Комиссии по защите конкуренции Республики Армения



ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ

SANTROSYAN ANAHIT

Head of Division of Legal Support of the Legal Department of the Competition Protection Commission of the Republic of Armenia

САНТРОСЯН АНАИТ

Начальник отдела правового обеспечения юридического управления Комиссии по защите конкуренции Республики Армения

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ «ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ» ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ*

ISSUES PERTAINING TO THE «HORIZONTAL» HIERARCHY OF NORMATIVE LEGAL ACTS IN THE CONTEXT OF ARMENIAN CONSTITUTIONAL REGULATIONS*

ПРОБЛЕМЫ «ГОРИЗОНТАЛЬНОЙ» ИЕРАРХИИ НОРМАТИВНО-ПРАВОВЫХ АКТОВ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫХ РЕГУЛИРОВАНИЙ АРМЕНИИ*

Իրավական համակարգում նորմատիվ իրավական ակտերը տարանջատվում են ըստ իրենց իրավաբանական ուժի՝ ստեղծելով որոշակի աստիճանակարգություն (հիերարխիա): Այն պոզիտիվ իրավունքի կառուցվածքային վերլուծություն է, որը փորձում է իրավական համակարգում առկա կապերը ներառել տեսական մի մոդելի մեջ, որը հնարավորություն է տալիս նկարագրել սովյալ իրավակարգի հիերարխիկ կառուցվածքը¹:

* Հոդվածը ներկայացվել է 10.05.2021, գրախոսվել է 03.06.2021, ընդունվել է տպագրության 23.08.2021:

* The article was presented 10.05.2021, was reviewed 03.06.2021, was accepted to publication 23.08.2021.

* Статья представлена 10.05.2021, рецензирована 03.06.2021, принята в печать 23.08.2021.

¹ Տե՛ս Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Սահմանադրության անմիջական գործողությունը և նորմերի կիրառման աստիճանակարգությունը սահմանադրության գերակայության համատեքստում, մաս 2, «Պետություն և իրավունք», Եր., 2020, թիվ 2 (87), էջ 8:



Նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունը իրավունքի գերակայության, իրավական որոշակիության և իրավական անվտանգության երաշխավորման գործընթացում ունի առանձնակի կարևորություն և, ըստ այդմ, իրավական պետության հիմնաքարերից է:

Հայաստանի իրավական համակարգում նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությանը սահմանադիրն անդրադարձել է Սահմանադրության¹ «Իրավական նորմերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածում, որը, ամրագրելով Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը, սահմանում է, որ օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

Հիշյալ համատեքստում ակնհայտ է, որ սահմանադրական կարգավորումները որևէ տարբերություն չեն դնում օրենքի և կոդիֆիկացված օրենքի (օրենսգրքի) միջև: Արդյունքում գիտագործնական կարևորություն է ստանում այն հարցադրման պատասխանը, թե ինչպիսի հարաբերակցության մեջ են գտնվում օրենքները օրենսգրքերի հետ:

Այս առումով հարկ է նշել, որ որոշ տեսաբաններ այն տեսակետին են, որ օրենսգիրքը իր կոդիֆիկացիոն բնույթի ուժով գերակայում է ոչ կոդիֆիկացված օրենքների նկատմամբ²: Այլ կերպ ասած՝ այն հանդես է գալիս որպես առաջինը հավասարների մեջ (Primus inter pares): Ընդ որում, այս երևույթը նկարագրելու համար մասնագիտական գրականությունում, ի թիվս այլ հասկացությունների, օգտագործվում են «հորիզոնական»³ և «առարկայական» աստիճանակարգություն եզրույթները⁴:

Օրենքի նկատմամբ կոդիֆիկացված օրենքի գերակայության հարցի առնչությամբ առկա է նաև հակառակ տեսակետը, ըստ որի հավասարը հավասարի նկատմամբ իշխանություն չունի (Par in parem non habet imperium): Այս մոտեցման կողմնակիցներն իրենց դիրքորոշումը հիմնավորում են նրանով, որ թե՛ օրենքը, թե՛ օրենսգիրքը ընդունվում են միևնույն մարմնի կողմից, միևնույն ընթացակարգով և կարգավորում են միատեսակ հասարակական հարաբերություններ՝ ունենալով հավասար իրավաբանական ուժ⁵:

Պետք է նշել, որ հիշատակված առաջին մոտեցումը բնորոշ չէ մայրցամաքային եվրոպական իրավագիտությանը⁶: Ի տարբերություն եվրոպական երկրների՝ ԱՊՀ որոշ երկրներում նկատ-

¹ Ընդունվել է 05.07.1995թ.: Շարադրվել է նոր խմբագրությամբ 06.12.2015թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21 / Հատուկ թողարկում: Հոդ. 1118:

² Տե՛ս, օրինակ՝ Лысаковский Г.А. Проблемы коллизии права. М.: Право и экономика, 2005, էջ 91, Алексеев С.С. Собрание сочинений. В 11 т. Т. 3. Проблемы теории права. М.: Статут, 2010. էջ 450:

³ «Հորիզոնական» բառի օգտագործումը բացատրվում է միևնույն հարթությունում գտնվող նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունը սահմանելու հանգամանքով: Այս մոտեցումը խիստ խոցելի է թվում, քանի որ «հորիզոնական» բառը բառարանային իմաստով անհամատեղելի է «աստիճանակարգություն» հասկացության հետ, իսկ քննարկվող դեպքում միևնույն տեսակի ակտերից մեկի մյուսի նկատմամբ գերակայության սահմանումը ինքնին բացառում է դրանց միևնույն հարթությունում դիտարկվելու հնարավորությունը: Այդ պատճառով սույն հոդվածի վերնագրում «հորիզոնական» աստիճանակարգություն եզրույթը կիրառվել է պայմանականորեն՝ ընդգծելու համար այն հանգամանքը, որ խոսքը վերաբերում է սահմանադրական կարգավորումներում միևնույն հարթությունում նախատեսված նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությանը:

⁴ Տե՛ս Петров А.А., Вопросы преодоления коллизий норм кодексов, устанавливающих собственный приоритет. Вестник Санкт-Петербургского университета. Право, 2019, էջեր 5-6:

⁵ Տե՛ս, օրինակ՝ Крылов О.М. Соотношение норм валютного и налогового законодательства Российской Федерации: вопросы теории и практики: дис. ... канд. юрид. наук. М., 2008, էջ 84, Бриксов В.В., О юридической силе кодифицированных федеральных законов, էջեր 82-92:

⁶ Տե՛ս Петров А.А., Шафиров В.М., Предметная иерархия нормативных правовых актов. М., 2014, էջեր 120-122:



վում է օրենքների նկատմամբ օրենսգրքերի գերակայության ամրագրման դեպքեր: Այսպես, օրինակ՝ Բելառուսի Հանրապետության 2018 թվականի հուլիսի 17-ի «Բելառուսի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի մասին» № 130-3 օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «Օրենսգրքերն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեն մյուս օրենքների նկատմամբ»¹: Ղրղզստանի Հանրապետության 2009 թվականի հուլիս 20-ի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» № 241 օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ իրավական ակտերն իրենց ունեցած իրավաբանական ուժով կազմում են հետևյալ աստիճանակարգությունը՝ Սահմանադրություն, Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին օրենք, Սահմանադրական օրենք, օրենսգիրք, օրենք (...)²:

Ուշագրավ է, որ օրենքների նկատմամբ օրենսգրքերի գերակայության դրսևորումները խորթ չեն նաև Հայաստանի Հանրապետությանը: Այսպես, «Իրավական ակտերի մասին» օրենքը³ սահմանում էր, որ օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին: Դրան համապատասխան մի շարք օրենսգրքեր ամրագրել էին ոլորտային գերակայության վերաբերյալ դրույթներ: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության նախկին քաղաքացիական դատավարության օրենսգրքի⁴ 1-ին հոդվածը 1-ին մասը նախատեսում էր, որ այլ օրենքներում (բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն օրենսգրքին: Նույն կերպ Հայաստանի Հանրապետության նախկին վարչական դատավարության օրենսգրքի⁵ 2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ այլ օրենքներում պարունակվող վարչական դատավարական նորմերը պետք է համապատասխանեն օրենսգրքին:

Սակայն ժամանակի ընթացքում օրենսդիրը հրաժարվել է օրենքների նկատմամբ օրենսգրքերի գերակայության դրույթից՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում⁶ ուղղակիորեն ամրագրելով հավասարը հավասարի նկատմամբ իշխանություն չունի թեզը (*Par in parem non habet imperium*): Մասնավորապես, նշյալ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է նորմատիվ իրավական ակտով նախատեսել հավասար իրավաբանական ուժ ունեցող այլ նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ գերակայության մասին նորմ:

Իհարկե, օրենսդրի որդեգրած նոր մոտեցումը առավել համահունչ է սահմանադրական կարգավորումներին, որոնք որևէ տարանջատում չեն նախատեսում օրենքի և օրենսգրքի առնչությամբ: Այս առումով տեղին է հիշատակել Սահմանադրական դատարանի հետևյալ դիրքորոշումը. «ՀՀ Սահմանադրության (2015 թ. փոփոխություններով) 5-րդ հոդվածը, սահմանելով իրավական նորմերի աստիճանակարգությունը, հստակ ամրագրել է, որ ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Հետևաբար, օրենքներ ընդունելիս օրենսդիր մարմնի հայեցողությունը բացարձակ չէ, այն սահմանափակված է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված հիմնարար սկզբունքներով, իրավակարգավորումների ընդհանուր տրամաբանությամբ և կոնկրետ նորմատիվ պահանջներով: (...) Նման ամրագրման միջոցով ՀՀ Սահմանադրությունը հանրային իշխանության բոլոր մարմիններին, ներառյալ օրենսդիր իշխանությանը, կաշկանդում է Սահմանադրությամբ (Սահմանադրության գերակայությամբ): ՀՀ Սահմանադրության 5-րդ

¹ Տե՛ս <https://pravo.by/document/?guid=3871&p0=H11800130> կայքէջում (հասանելի է 04.05.2021թ. դրությամբ):

² Տե՛ս <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/202591> կայքէջում (հասանելի է 04.05.2021թ. դրությամբ):

³ Ընդունվել է 03.04.2002թ.: Ուժը կորցրել է 07.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2002.05.21/15(190):

⁴ Ընդունվել է 17.06.1998թ.: Ուժը կորցրել է 09.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

⁵ Ընդունվել է 28.11.2007թ.: Ուժը կորցրել է 07.01.2014թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007.12.19/64(588) Հոդ.1300:

⁶ Ընդունվել է 21.03.2018թ.: Ուժի մեջ է մտել 07.04.2018թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373:



հողվածի 1-ին մասից բխում է, որ օրենքն իրավական է այնքանով, որքանով որ այն համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը»¹:

Մյուս կողմից, նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության հիմքում դրված է դրանց իրավաբանական ուժը, որը պայմանավորող հիմնական գործոնը այն ընդունող մարմնի տեղն ու դերն է հանրային իշխանության մարմինների շրջանակում: Դրանից զատ նորմատիվ իրավական ակտի իրավաբանական ուժի վրա ազդեցություն կարող են ունենալ մի շարք լրացուցիչ գործոններ²: Ասվածի օրինակ է սահմանադրական օրենքի և օրենքի աստիճանակարգությունը, որոնք թեև ընդունվում են նույն մարմնի կողմից, սակայն տարբեր պահանջների պահպանմամբ: Մասնավորապես, Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքները ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին, իսկ սահմանադրական օրենքներն ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Եվ այս տեսանկյունից ևս թե՛ սահմանադիրը, թե՛ օրենսդիրը օրենսգրքերի ընդունման կապակցությամբ չեն սահմանել որևէ առանձնահատկություն, որը թույլ կտար խոսել օրենսգրքի՝ օրենքից բարձր իրավաբանական ուժ ունենալու մասին:

Այդուհանդերձ, դժվար է անտեսել օրենսգրքերի՝ որպես կոդիֆիկացված ակտերի նշանակությունը հայրենական իրավական համակարգի գաղափարաիրավական տարրերի³ համատեքստում: Ասվածն առավել ակնառու է դառնում այն իրողության հաշվառմամբ, որ նույնիսկ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում օրենսգրքերի գերակայության հնարավորությունը բացառող դրույթ ամրագրելուց հետո առանձին օրենսգրքեր շարունակում են պահպանել նման դրույթներ: Այսպես, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի⁴ 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը ամրագրում է, որ այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին: Նույն կերպ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի⁵ 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի⁶ 1-ին հոդվածի 3-րդ մասը սահմանում են այդ օրենսգրքերի գերակայությունը այլ օրենքների նկատմամբ: Օրենքների նկատմամբ օրենսգրքի գերակայության յուրատեսակ դրսևորում կարելի է դիտարկել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի⁷ 1-ին հոդվածի 1-ին մասի կարգավորումը, ըստ որի՝ քրեական պատասխանատվություն նախատեսող նոր օրենքներն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում:

Ավելին, դատական պրակտիկան որոշ դեպքերում շարունակում է վերահաստատել օրենսգրքի գերակայության գաղափարը՝ չնայած, որ կոնկրետ դեպքում համապատասխան օրենսգիրքը ուղղակիորեն այլևս չի պարունակում այդպիսի դրույթ: Դրա վկայությունն է Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3317/05/17 վարչական գործով 14.05.2019թ. և թիվ ՎԴ/2164/05/19 վարչական գործով 22.04.2021թ. որոշումներում ձևակերպված այն դիրքորոշումը, որ դատավարական գործողություններ կատարելու՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարու-

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 10.11.2017թ. թիվ ՍԴՈ-1384 որոշումը:

² Տե՛ս Петров А.А., Шафиров В.М. Предметная иерархия нормативных правовых актов. М., 2014, էջեր 63-74:

³ Իրավական համակարգի գաղափարաիրավական տարրերին Սահմանադրական դատարանն անդրադարձել է 26.03.2021թ. թիվ ՍԴՈ-1586 որոշման շրջանակում:

⁴ Ընդունվել է 05.05.1998թ.: Ուժի մեջ է մտել 01.01.1999թ. Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

⁵ Ընդունվել է 01.07.1998թ.: Ուժի մեջ է մտել 12.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.21/22(55):

⁶ Ընդունվել է 02.05.2001թ.: Ուժի մեջ է մտել 15.06.2001թ. Տե՛ս ՀՀՊՏ 2001.06.15/17(149) Հոդ.457:

⁷ Ընդունվել է 18.04.2003թ.: Ուժի մեջ է մտել 01.08.2003թ. Տե՛ս ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407:



թյան օրենսգրքով սահմանված ժամկետները գերակայում են այլ օրենքներով սահմանված ժամկետների նկատմամբ:

Շարադրվածի լույսի ներքո կարելի է եզրահանգել, որ օրենսգրքի՝ որպես կոդիֆիկացված օրենքի տեղը նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունում կարող է լրացուցիչ քննարկման առարկա լինել՝ անհրաժեշտության դեպքում նախատեսելով դրա՝ օրենքից բարձր իրավաբանական ուժն ապահովող համարժեք լուծումներ:

Պարզաբանման ենթակա հաջորդ հարցադրումը վերաբերում է նրան, թե արդյոք առկա է կամ կարող է լինել աստիճանակարգություն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի շրջանակում: Բանը նրանում է, որ սահմանադրական մակարդակում ամրագրված է միայն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին համապատասխանության պահանջ, իսկ օրենսդրական մակարդակում, ի տարբերություն «Իրավական ակտերի մասին» օրենքի՝ «Իրավական ակտերի տեսակները և ստորադասությունը» վերտառությամբ 2-րդ գլխի, որը սահմանում էր նաև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունը, բացակայում են այս հարցի վերաբերյալ կարգավորումներ:

Օրենսդրի նման մոտեցման հիմքում ենթադրաբար դրված է օրինականության սահմանադրական սկզբունքը, որը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի առնչությամբ ընդհանրացված կերպով արտացոլված է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում: Դրան համապատասխան՝ Սահմանադրությամբ նախատեսված մարմինները Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Այլ կերպ ասած՝ սահմանադիրը վկայակոչված դրույթով ձևակերպել է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման լիազորության պատվիրակման որոշակիության և բացառիկության, ինչպես նաև դրա իրավաչափ իրացման կանխավարկածը:

Մինչդեռ նման մոտեցումը չունի գործնական երաշխավորվածություն և չի կարող բացառել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի միջև հակասության հնարավորությունը: Պատահական չէ, որ մեկ այլ դեպքում, ինչպիսին սահմանադրական օրենքների և օրենքների միջև գերակայության խնդիրն է, սահմանադիրը հարցին տվել է որոշակի լուծում՝ չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական օրենքների կարգավորման առարկան արդեն իսկ կանխորոշված է սահմանադրական մակարդակով:

Ինչպես նշվեց, նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության հիմքը դրանց իրավաբանական ուժն է, որը պայմանավորող հիմնական գործոնն այն ընդունող մարմնի տեղն ու դերն է հանրային իշխանության մարմինների շրջանակում: Այլ կերպ ասած՝ հանրային իշխանության մարմինների հիերարխիան կանխորոշում է դրանց նորմատիվ իրավական ակտերի իրավաբանական ուժը և, հետևաբար, գերակայությունը միմյանց նկատմամբ¹:

Նշյալ մոտեցմամբ խնդիրը դիտարկելու դեպքում պարզ է դառնում, որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի միջև ևս առկա է որոշակի աստիճանակարգություն: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Կառավարության և պետական կառավարման համակարգի մարմիններին, որոնց միջև առկա է հստակ ենթակայություն:

Այնուամենայնիվ, բարձրացված հարցը այս մեթոդով չի կարող ստանալ հանգուցալուծում այն բոլոր դեպքերում, երբ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը դուրս է հանրային իշխանության մարմինների հիերարխիկ համակարգից: Ասվածը առավել ակն-

¹ Տե՛ս Սեմյոնով Ս.Ս., Մախարով Վ.Ս. Предметная иерархия нормативных правовых актов. М., 2014, էջեր 70-71:

հայտ է այնպիսի մարմինների դեպքում, ինչպիսիք են, օրինակ՝ ինքնավար և անկախ մարմինները, ինչպես նաև համայնքի ավագանին:

Վերոշարադրյալ համատեքստում հիշատակման արժանի են մի քանի երկրների կողմից որդեգրված նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության դրսևորումները: Այսպես, Բելգիայի Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Այն սահմանում է իշխանությունների տարանջատումը և վերջիններիս գործունեության կարգը, հասարակության հիմնական արժեքները և անձանց հիմնական իրավունքները:

Նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգային համակարգում Սահմանադրությանը, ըստ հերթականության, հաջորդում են՝

1. Հատուկ ակտեր (special acts), որոնք ընդունվում են հատուկ մեծամասնությամբ (special majority) և սահմանում են պետական կառավարման համակարգի մարմինների գործունեության հիմնական ուղղությունները,

2. Ակտերը (acts), որոշումները (decrees) և կանոնակարգերը (ordinances),

3. Թագավորական և Կառավարության հրամանները,

4. Նախարարական հրամանները,

5. Տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները¹:

Գերմանիայի Սահմանադրությունը՝ Հիմնական օրենքը, ունի բարձրագույն իրավաբանական ուժ և դրանից է բխում երկրի ողջ իրավական ակտերի համակարգը: Իրավական ակտերի համակարգի աստիճանակարգությունը շարունակում են միջազգային իրավունքի հիմնարար կանոնները, այնուհետև՝ օրենքները, որոնք ընդունվում են Բունդեսթագի և Բունդեսռաթի կողմից: Օրենքներին հաջորդում են ստատուտային ակտերը՝ ընդունված Ֆեդերալ կառավարության, նախարարների և Հոդերի ղեկավարների կողմից: Իսկ արդեն համայնքների ղեկավարների կամ քաղաքապետերի ենթաօրենսդրական ակտերը համարվում են առավել ցածր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտեր²:

Իրավական ակտերի աստիճանակարգությունը հստակ տարանջատված է Լատվիայում, որը ներկայացվում է ստորև.

1. Միջազգային պայմանագրեր,

2. Լատվիայի Հանրապետության սահմանադրություն,

3. Խորհրդարանի կողմից ընդունված օրենքներ,

4. Կառավարության ընդունած կարգավորումներ,

5. Լատվիայի Բանկի, Ֆինանսական և կապիտալի շուկայի հանձնաժողովի և Հանրային ծառայությունների հանձնաժողովի կանոնակարգերը (Լատվիայի իրավական համակարգում այդ կանոնակարգերն ունեն նույն կարգավիճակի ուժը, ինչ Կառավարության կողմից ընդունված կարգավորումները),

6. Տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտեր³:

Մոլդովայի Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավական ուժ, և բոլոր օրենքներն ու այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն վերջինիս⁴: Մինչույն ժամանակ Մոլդովայի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է նորմատիվ իրավական ակտերի հետևյալ ցանկը.

¹ Տե՛ս https://e-justice.europa.eu/content_member_state_law-6-be-en.do?member=1 կայքէջում (հասանելի է 04.05.2021թ. դրությամբ):

² Տե՛ս <https://www.btg-bestellservice.de/pdf/80201000.pdf> և https://e-justice.europa.eu/content_member_state_law-6-de-en.do?member=1 կայքէջերում (հասանելի է 04.05.2021թ. դրությամբ):

³ Տե՛ս https://e-justice.europa.eu/content_member_state_law-6-lv-en.do?member=1 կայքէջում (հասանելի է 04.05.2021թ. դրությամբ):

⁴ Տե՛ս <https://www.presedinte.md/eng/titul1> կայքէջում (հասանելի է 04.05.2021թ. դրությամբ):



1. Մոլդովայի Հանրապետության Սահմանադրություն,
2. Խորհրդարանի օրենքներն ու կանոնակարգեր,
3. Մոլդովայի Հանրապետության Նախագահի հրամանագրեր,
4. Կառավարության որոշումներ և կարգադրություններ,
5. պետական կառավարման կենտրոնական մասնագիտացված մարմինների նորմատիվ ակտեր,
6. ինքնավար պետական կառավարման մարմինների նորմատիվ ակտեր,
7. հատուկ իրավական կարգավիճակ ունեցող ինքնավար տարածքային կազմակերպությունների իշխանությունների նորմատիվ ակտերը,

8. տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտեր:

Օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտերի իրավական ուժը սահմանվում է՝ հաշվի առնելով ընդունող մարմնի իրավասությունները և կարգավիճակը, ինչպես նաև ընդունվող ակտը: Նույն հոդվածի համաձայն՝ միևնույն իրավական ուժն ունեցող ակտերում հակասությունների դեպքում առաջնահերթություն է տրվում ավելի ուշ ուժի մեջ մտած իրավական ակտին, բացառությամբ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասով սահմանված բացառիկ և հատուկ իրավական նորմերի հետ կապված հակասությունների¹:

Անդրադառնալով տարածաշրջանային երկրներին՝ հարկ է վերլուծել նաև Վրաստանի իրավական ակտերի աստիճանակարգությունը: Մասնավորապես, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է Վրաստանի իրավական համակարգի ակտերի հիերարխիան հետևյալ կերպ.

1. Վրաստանի Սահմանադրություն, սահմանադրական օրենք,
2. Վրաստանի սահմանադրական համաձայնագիր,
3. Վրաստանի միջազգային համաձայնություններ և պայմանագրեր,
4. օրգանական օրենքներ,
5. օրենքներ, Վրաստանի նախագահի հրամանագրեր, Խորհրդարանի կանոնակարգը:

Ընդ որում, նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ պետական մարմինների (պաշտոնատար անձանց) նորմատիվ իրավական ակտերի իրավական ուժը որոշվում է գործադիր մարմնում այդ գերատեսչությունների (պաշտոնատար անձանց) աստիճանակարգության համաձայն²:

Այսպիսով, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունն ունի սահմանադրաիրավական ամրագրում, որպիսի պայմաններում խնդրի լուծում կարող է լինել Հայաստանի սահմանադրական կարգավորումներում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության նախատեսումը կամ այդպիսի հնարավորության պատվիրակումը օրենսդրին:

Միաժամանակ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նորմատիվ իրավական ակտերի միջև հակասությունների հաղթահարման և նորմատիվ իրավական ակտերի հետ կապված այլ հարցերը ներկայումս կարգավորվում են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով: Այսինքն՝ առկա պայմաններում ստացվում է այնպիսի իրավիճակ, երբ բոլոր նորմատիվ իրավական ակտերի համար օրենսդրական տեխնիկայի, նորմատիվ իրավական ակտի կառուցվածքի, նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նորմատիվ իրավական ակտերի գործողությունը դադարեցնելու, ժամկետների հաշվարկման, նորմատիվ իրավական ակտերի, ներառյալ՝ սահմանադրական օրենքների միջև հակասությունների հաղթահարման վերաբերյալ դրույթները սահմանվում են սովորական օրենքի մակարդակով:

¹ Տե՛ս http://base.spininform.ru/show_doc.fwx?rgn=103704 կայքէջում (հասանելի է 04.05.2021թ. դրությամբ):

² Տե՛ս <https://matsne.gov.ge/en/document/view/90052?publication=25&fbclid=IwAR2gazx9dVnp4DZGW0Z96YGPsjMt9rkfG1FFqHb-jvosyix0TZpaDitrOo> կայքէջում (հասանելի է 04.05.2021թ. դրությամբ):



Այս խնդիրն առավել ակնառու է դառնում 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների համատեքստում, երբ հիմք դրվեց նորմատիվ իրավական ակտերի նոր տեսակի՝ սահմանադրական օրենքների ընդունման հնարավորությունը: Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվեց, որ Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը սահմանադրական օրենքներն են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

Ինչպես նշվում է սահմանադրական փոփոխությունների նախագծի հիմնավորումներում, որպես սահմանադրական օրենքներ ընտրվել են այն օրենքները, որոնք անմիջականորեն ազդում են մարդու հիմնական իրավունքների և ազատությունների, ինչպես նաև պետական իշխանության կազմակերպման վրա, որտեղ ավելի մեծ կայունություն և ավելի մեծ համաձայնություն է պահանջվում, քան սովորական օրենքների դեպքում¹: Հենց դրա համար է նախատեսված, որ դրանք պետք է ընդունվեն որակյալ մեծամասնությամբ, այն է՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

Այս հարցին անդրադարձել է նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով): Վենետիկի հանձնաժողովը, մասնավորապես, անդրադառնալով նորմատիվ իրավական ակտերի մասին օրենսդրության սահմանման անհրաժեշտությանը, նշել է, որ թեև նման օրենքի ընդունումն իմպերատիվ չէ պետությունների համար և շատ եվրոպական երկրներ անգամ հրաժարվել են այս օրենքից, այնուամենայնիվ, Բուլղարիայի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ կարծիք հայտնելիս Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ «Նորմատիվ ակտերի մասին» օրենքի նպատակը օրենքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքների ապահովումն է, որի իրականացումը կախված է օրենսդրության ձևավորման գործընթացից:

Հանձնաժողովը նույն որոշմամբ քննարկման առարկա է դարձրել այն հարցը, որ չնայած օրենքը կարգավորում է սահմանադրական կարևորության հարցեր, իր բնույթով, այն ունի նույն իրավական ուժը, ինչ Բուլղարիայի Խորհրդարանի կողմից ընդունված այլ իրավական ակտերը: Հետևաբար, եթե Խորհրդարանի կողմից ընդունված օրենքները Սահմանադրությանը չհամապատասխանելու դեպքում կարող են չընդունվել, ապա նույն իրավիճակը չենք ունենում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքին չհամապատասխանելու դեպքում: Խորհրդարանի կողմից ընդունվող օրենքի անհամապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքին չի կարող հիմք հանդիսանալ այն չընդունելու համար²:

Այսպիսով՝ ներկայացված հետազոտության հիման վրա կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. Սահմանադրական կարգավորումների համալրեքստում կողիֆիկացված օրենքը՝ օրենսգիրքը, ունի նույն իրավաբանական ուժը, ինչ մյուս օրենքները, և չի կարող պարունակել այլ օրենքների նկատմամբ գերակայություն սահմանող դրույթներ:

2. Հայրենական իրավական համակարգի գաղափարաիրավական տարրերի առանձնահատկությունների հաշվառմամբ լրացուցիչ քննարկման առարկա է նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունում օրենսգրքի տեղը սահմանադրական մակարդակում վերանայելու

¹ Տե՛ս <http://parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/naxagci%20himnavorumner.pdf> կայքէջում, էջ 31 (հասանելի է 04.05.2021թ. դրությամբ):

² Տե՛ս [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2009\)053-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2009)053-e) կայքէջում, 8-11-րդ պարագրաֆներ (հասանելի է 04.05.2021թ. դրությամբ):



հարցը՝ անհրաժեշտության դեպքում նախատեսելով օրենսգրքի՝ օրենքից բարձր իրավաբանական ուժն ապահովող համարժեք լուծումներ:

3. Սահմանադրական մակարդակում ամրագրված է միայն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին ստորադաս լինելու պահանջ:

4. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի միջև առկա է որոշակի աստիճանակարգություն, որը պայմանավորող հիմնական գործոնն այն ընդունող մարմնի տեղն ու դերն է հանրային իշխանության մարմինների շրջանակում:

5. Սահմանադրական կարգավորումների շրջանակում հնարավոր չէ որոշել հանրային իշխանության մարմինների հիերարխիկ համակարգից դուրս գտնվող սահմանադրական մարմինների (ինքնավար մարմիններ, անկախ մարմիններ և այլն) ընդունած ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի տեղը նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունում: Ընդ որում, այս խնդրի լուծում կարող է լինել սահմանադրական մակարդակում այդպիսի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության նախատեսումը կամ նման հնարավորության պատվիրակումն օրենսդրին:

6. Արդարացված է թվում նորմատիվ իրավական ակտերի հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքին սահմանադրական օրենքի կարգավիճակի շնորհումը:

Annotation: The article aims to study and analyze several issues pertaining to the hierarchy of normative legal acts in the Republic of Armenia. Remarkably, the Constitution currently envisages a system of exclusively "vertical" hierarchy of normative legal acts. While the Article discusses whether there should also be a "horizontal" hierarchy between bylaws that are envisaged on the same level by the Constitution, however, are adopted by bodies with different constitutional statuses, as well as between laws and codified laws (Codes).

Аннотация: Цели статьи – изучение и анализ ряда вопросов, относящихся к иерархии нормативных правовых актов в Республике Армения. В частности, в настоящее время Конституция предусматривает систему исключительно «вертикальной» иерархии нормативных правовых актов. В статье обсуждается вопрос, должна ли существовать «горизонтальная» иерархия между подзаконными нормативными правовыми актами, которые несмотря на то что в Конституции предусмотрены на одном уровне, однако принимаются органами с разным конституционным статусом, а также между законами и кодифицированными законами (кодексами).

Հիմնաբաներ՝ իրավական համակարգ, նորմատիվ իրավական ակտեր, նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգություն, «հորիզոնական» աստիճանակարգություն, առարկայական աստիճանակարգություն, սահմանադրական օրենք:

Key words: legal system, normative legal acts, a hierarchy of normative legal acts, "horizontal" hierarchy, subject hierarchy, constitutional law.

Ключевые слова: правовая система, нормативные правовые акты, иерархия нормативных правовых актов, «горизонтальная» иерархия, предметная иерархия, конституционный закон.